

—Հայր:

Բարձրագույն դպրոցի նստարանից իջնելուն պէս նա վազում է ապահով շահի ետեւից: Ստանում է գեղեցիկ պաշտօն, ահագին ուժիկով, ձեռքերը ծալում է ազա գործատիրոջ առաջ, նրա ստորուկն է, նրա գեղաւան է, ամեն ինչի «այս» է ասում, փառաբանում է տղու կի քաղաքականութիւնը, ինքն էլ ծծում է, ինքն էլ հարստանաւորում է բանուորին ու արհեստաւորին եւ հասնում է աշխարհային փառքի գագաթնակէտին, Ո՛վ է այդ ինտելիգենտը: —Հայ է:

Մենք այսպէս ենք գնում, մեր պաշտամունքը սա է: Իսկ վրացին նստում է իր հողի վրա, գիրկառնապանակում ընկերակցութիւններ է կազմում, գրքեր է տպում ժողովրդի համար: Նա փող չունի, բայց յետոյ կունենայ: Նա տոկոս է տալիս հային, փող է վերցնում նրանից եւ փառաւոր տպարան է բաց անում:

Փորձեցէք խօսել հայի հետ մի լաւ տպարանի քայ անելու մասին: Նա այնպէս կը ծագրէ ձեզ, որ չէք իմանայ, թէ ուր փախչէք: Եւ մենք, հայ հեղինակներս, մեր գրքերը տպել տալու համար կը դիմենք վրաց տպարանին, որովհետեւ նա մեծ է, բարեկարգ է, կարող է գործ կատարել եւ լաւ կատարել:

Ո՛վ ինչ կը թողնէ իր ազգին: Հայ վախճաւուն «բարի պտուղները» բազմապատ մի սերունդ կը պարգեւէ իր ազգին, իսկ նրանից տոկոսով փող վերցրած վրացին կը թողնէ մտաւոր գործունէութեան մի այնպիսի հզօր դրոշմ, ինչպիսին է տպարանը, այն տպարանը, որ այսօր առաջինն է Կովկասում:

Եւ ասկանք մենք այսպէս չէինք: Այն ժամանակ, երբ Ոսկան վարդապետը Եւրոպայում ոսկոր էր մաշում հայ տպարանը կատարելագործելու, յարատեւ դարձնելու համար, վրացին երազում էլ չէր տեսել տպարանը:

Այսօր—բոլորովին ուրիշ բան. այսօր դերերը փոխվել են: Այսօր մենք փողի ու շահի ստրուկներ ենք, իսկ վրացին կուլտուրական գործ կատարելու եռանդով է լցված:

Գուշակեցէք, թէ ումն է ապագան...

1.

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Խ Ն

I

Բ. Տէր-Ղազարեանց. «Տարաբամ» պատկ, պոէմա (Ղազարի գիւղական կեանքից), 48 էր. գ. 10 կ. Քիֆլիս 1901 թ.

«Տարաբամ» պատկ—ը յօդուածագիր... ներդրութիւն, հեղինակը անուանել է պոէմա. բայց այդ անուշադ գրի վրիպակ է. որովհետեւ զա

պատմութիւնների շնորհիւ, աւետեաց երկիրներ էին թուում ինչ: Գնացի արտասահման Մաքառանը տակն ու վրա արին պայուսակա, բայց անցաթուղթ չը հարցրին Սակայն, առաջին հիւրանոցունն եւ ի՞նչ եւ ստիպվեցի ամեն կողմից պատկերացնել իմ անձնաւորութիւնը ոստիկանական թերթի վրա: Զեխերի մայրաքաղաք Պարսպուտ, վազօնից դուրս գալիս, եւ չալակեցի պայուսակա, ուզելով ստուգել, թէ արգելք թող տրվում է այնտեղ այդպիսի յանդիմանութիւն մի վայելագոյնս պարտի: Ի զուարճութիւն իմ, եւ համոզվեցի, որ ոչ ոք մատով ցոյց չէ տալիս, չէ ծաղրում ինձ եւ որ ոչ մի թերթի լրատու իր ծոցատետրի մէջ գրի չէ անցնում այդ «դէպքը» իր ընթերցողներին գուարճացնելու համար Պայուսակա վայր դրեց իմ նստեցի վրան: Ո՛վ ոք կանգ չառաւ իմ առաջ, չը դարձաւ ու չը ծիծաղեց: Հիւրանոցում ինձ մանրակրկիտ գննեցին, բայց հանգիստ թողեցին:

—Հիմաւի քաղաք է,—մտածեցի ես.—Վարչապետը ինձ անպատճառ ծաղրի առարկայ կը դարձնէին զանազան թերթերում:

Հետեւեալ առաւօտը եւ դիմեցի անցորդներին մէկին չեխերէն իրողով: Անցորդը ինչ որ միմիջեց բարկացած ու հեռացաւ: Ես սկսեցի գերմաներէն խօսել մի ուրիշ անցորդի հետ: Նա արհամարհական հայեացք գցեց ինձ վրա ու նոյնպէս շտապեց հեռանալ: Զէ, ինչպէս տեսնում եմ, այստեղ էլ դրախտ չէ, այստեղ էլ բաւական փետրաւան է արված ազատութիւնը:

Պէտք է աւելի հետաւ գնալ:

Պրոստիայի կայարաններից մէկում ես ստիպված էի մի քանի ժամ սպասել գնացքին: Տօն օր էր եւ կայարանի չէնքի առաջ կանգնած էր լեհացի գեղջուկների մի խումբ: Ես մօտեցայ նրանց: Լսելով նրանց արտունջները, որ պրոսական իշխանութիւնները ճնշում են նրանց դպրոցներն ու եկեղեցիներ, ես սկսեցի խորհուրդներ տալ, թէ ինչ միջոցներ պէտք է

ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի լրագրական ներքին լուր: Մի աղջկայ շատ շուտ եւս պակել, գրեթէ երեւոյթ ժամանակը, ու նա անարարացել է, եւ ահա պ. Բ. Տէր-Ղազարեանց «պատմութիւն» գրքը իր «Ձօնի» մէջ:

Բառ առ բառ դէպք չի կարելի պատմել ի հարկէ, բայց շատ պահանջող չի կարելի լինել մի հեղինակից, որ գրում է «ժպիտ» ու խորախճան խաղում էին դէմքին» եւ կարծում է, թէ վայր ընկնող աստղին հայերէն «գիտաւոր աստղ» են ասում:

Ուսանաւորը ձ 18 Տրեդակովսկի է:

«Երկրից թափուած վառ չողերի ծոր» Լուսով էր պատում, դա նա անտառ եւ ձոր... Սակայն ամենահետաքրքրականը այդ պոէմայում այն է, որ գտնվել է հրատարակիչ նրա համար: Գրքիցի ձեւակաւին կարող եմ եմք.

«Հրատարակութիւն Գրիգոր Զ. Եւրասիանցի»:

II

Յակ. Ղազարեան. Մանկական բեմ պարտական էր կեանքից, I. «Վա» վաղա. Վա. մէկ արարածով, II. «Երկրից» խաղալ չէ. կատակեք. մէկ արարածով, 40 էր. գ. 15 կ. Քիֆլիս 1901 թ.

Պ. Ղազարեան ուղեցել է վոլգայի վրայ գրել երեխաների համար եւ իւր գրածները խաղալ է տուել աշակերտներին ու աշակերտուհիներին Ռաշտի ուսումնարանում:

Մեր կարծիքով, պ. Ղազարեան սաստիկ սխալվել է: Նրա հեղինակած թատերական դրամները ոչ գեղարուեստական են, ոչ էլ խրատական: Առաջին վոլգայի վրայ գրեալ թատերական խաղերն են այնպիսի երեւոյթների մասին եւ ասում են այնպիսի բաներ, որոնք ամենեւին մանկական չեն:

Երկրորդ վոլգայի վրայ գրեալ վայելագործութեան օրինակատետրի բարոյագիտութիւն է իրենցում:

Բացի այդ, անհամակրելի են վարժուհու տիպը առաջին վոլգայի վրայ եւ վարժապետի տիպը երկրորդում:

Վարժուհին շատ կոպիտ է եւ անարար, իսկ ուսուցիչը կարծես ուրիշ միջոց չը գտէ աշակերտի վրա ազդելու համար, բացի առանց ձախ թողնելուց.—մի պատժ, որ եւ հակամանկավարժական է, եւ հակաուղղական, եւ հակամարդասիրական:

S. Թ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Շուտով թիֆլիսում լոյս կը տեսնի Լեւոնտովի «Դեւ» պոէմայի երրորդ հայերէն

դիմեն նրանք իրանց իրաւունքները պաշտպանելու համար: Ոգեւորութեան ամենաթունդ րօպէին զգացի, որ մի ձեռք ճանկեց ուսու Շուռ եկայ եւ տեսայ իմ առջեւ մի թիֆլիսեան պարսկ պաշտօնական գլխարկով:

—Դուք արտադրացի էք,—հարցրեց նա: —Վարչապետի: —Ցոյց տուէք ձեր անցաթուղթը: Ես ցոյց տուեցի:

—Դուք եկել էք այստեղ գրգռելու այստեղի հպատակներին, որ չը հնազանդվեն իրանց կառավարութեան: Այս ինչ կանոնադրութեան 42-րդ յօդուածով...

Զեմ իշու՛մ ինչ կանոնադրութեան անուն տուեց ու ինչ էր 42-րդ յօդուածի բովանդակութիւնը.—այնքան է միայն միտա, որ ինձ հազիւ հաջ աջողվեց ազատվել այդ յօդուածի գործադրութիւնից եւ նոյն օրն եւ եթ հեռանալ իմ անդիտաւորեալ խոսքարարութեան տեղից:

Ես չեմ թւիլ այն բոլոր հիասթափութիւնները, որոնց ենթարկվեցի արտասահմանում: Սխալ յոյսերիս վարագոյրները պատմեցին: Այդ զգողված առգառտները յետ ընթերցի իմ նաւը այն կէտը, որտեղից ճանապարհ էի ընկել:

Ուրեմն ամբողջ աշխարհում չը կայ այնպիսի մի անկիւն, այնպիսի մի ապաստարան, ուր մարդ կարողանայ անձեռնմխելի պահել իր ազատութիւնը, լիովին պահպանել իր ինքնութիւնը: Այդ հանելուկի թանձրացած խաւարի տակ ճնշված, ես յանկարծ հասկացայ իմ ամբողջ միամտութիւնը: Գիտակցութիւնս լուսաւորվեց մի բողբոս մտքից,—չէ որ այդ ըզձալի երկրորդ գոյութիւնն ունի եւ գտնվում է աւելի մօտ, քան միւս բոլոր երկրները: Ի՞նչ որ այդ երկրում եւ վայելում եւ բոլոր անկապտելի իրաւունքները, չենթարկվելով ոչ մի արգելքի. չէ որ այնտեղ իշխողը իմ կամքն է միայն... Բայց ո՞ր է այդ երկիրը: Իմ գլխում:

Բայց ինչու այդքան ուշ արեցի ես այդ գիւ-

թարգմանութիւնը: Հետաքրքիր է, որ այդ թարգմանութիւնը արել է մի պարսկահայ, պ. Յովսէփ Միրզայեանց, որ այդ գրութեան ընթացքի գեղեցկութիւնները ըմբռնելու համար ուսումնասիրել է ուսուցիչ լեզուն: Պ. Թ. Միրզայեանց անշուշտ չէ մեր գրականութեան մեջ: Նա արդէն տպած ունի (Թ. Հ. Հրատ. ընկե-րութեան հրատարակութեամբ) Վալտեր-Սկոտի «Լորդերի կղզի» պոէմայի թարգմանութիւնը անգլիերէն ընդգրկի:

Թիֆլիսի ձիաքաղաքի անանուն ընկերութիւնը ստորագրութիւն է բացել այն բաժնեթղթերի համար, որ այդ ընկերութիւնը դուրս է թողնում ֆիւնդիւլիւքը անցկացնելու համար դէպի ս. Դաւթի սարի գլուխը եւ էլ քաղաքական տրամկայ շինելու դէպի Կօլօր:

Ի նկատ աւելելով ժանտախտի երկիրը, որ կարող է անցնել Անդրկովկաս Կ. Պոլսից, Թիֆլիսի քաղաքային սանիտարական—բժշկական խորհուրդը որոշեց. 1) առաջարկել քաղաքի թաղական բժիշկներին իւրաքանչիւր օր կանոնաւորապէս գննել իրանց յանձնված քաղաքամասերը եւ առանձին ուղարկել ընկերութիւնը դարձնել ուսուցիչի եւ խնդիրի պաշարնդէնի վրա շուկայում, նոյնպէս եւ կեղտոտ պահվող տեղերի վրա, 2) անյապաղ հաղորդել սանիտարական—բժշկական վերատեսչին ազգաբնակչութեան կողմից կեղտոտված բոլոր տեղերի մասին, որպէս զի միջոցներ ձեռք առնվեն նրանց սաքելու համար, 3) սանիտարական կանոնները խախտելու բոլոր դէպքերի մասին կազմել արձանագրութիւններ եւ յանցաւորներին ենթարկել դատաստանական պատասխանատւութեան, 4) պարտաւորեցնել թաղական բժիշկներին երկու շաբաթից յետոյ հաշիւ ներկայացնել այն միջոցների մասին, որոնք ձեռք են առնված քաղաքի սանիտարական դրութիւնը բարելոցելու համար:

Յինանները միմիայնութիւնը, միւս միմիայնութիւնները երգականութիւններն իմանալու համար, ուղարկել է նրանց ակցիօնական ընկերութիւնների կանոնադրութեան փոփոխութիւնների նախագիծը: Նոր կանոնադրութեան գլխաւոր սկզբունքն է—սաստկացնել ակցիօնական ընկերութիւնների հիմնադիրները պատասխանատւութիւն, որոնք, ըստ այս կանոնադրութեան, հինգ տարվայ ընթացքում պարտաւորվում են պատասխանատու լինել ընկերութեան վնասի եւ օգտի համար: Հիմնադիրները կենթարկվեն նաեւ քրեական պատասխանատւութեան ակցիօնները:

Այդ օրպէից սկսած ինձ համար անտարբեր դարձան բոլոր հրամանները ու արգելքները, իրաւաբանական սահմանումները եւ իրաւային կանոնները: Եթէ անցաթուղթս վաւերացված չը լինի գերմանական հիւպատոսի կողմից եւ պրոսացիները այդ պատճառով ինձ նեղեն առանձնազրկում, այդ էլ խանդարիլ ինձ մեղքով տեղափոխվել Պարսի եւ դատապարտել նրանց ջնջման: Եթէ այժմ դէպք լինէր ինձ լսել պրոսացիի ոստիկանի սպառնալիքը եւ թարկել ինձ խոսքարարութիւնը նախատեսուող 42-րդ յօդուածին, ես կը պատասխանէի մտքում.—Ես արհամարհում եմ այդ ստոր յիմարութիւնը եւ քեզ, փքված պրոսացի: Դու կը ձերբակալես ինձ անմեղ տեղը, իսկ ես կը նախատեսմ քեզ ըստ արժանոյն:

Որովհետեւ, նոյն իսկ կապելով ինձ ու բանաւ գրելով, նա չէր կարող ըսել ու բանաւարկել իմ միտքը, չէր կարող ձեռք տալ իմ գրելիս ազատութեան, գլխիս, ուր եւ միշտ միակ տէրն եմ իմ կամքի:

Այդպէս եւ դատում ես եւ բոլոր ուրիշ դէպքերում: Ոյժը կարող է ինձ պատուիրել,—այս ինչ կամ այն ինչ բանն արա, եւ ես կանեմ, բայց ոչ մի ոյժ չէ կարող ստիպել ինձ

ներից կարեւոր տեղեկութիւններ թաքցնելու համար: Սրա հետ միասին աւելացրած եմ եւ պահանջներ ընկերութիւնների վարչութիւններին: Վերջինները նոր կանոնադրութեամբ պարտաւոր են հաշիւ տալ, բանալ իրանց հաշվետառանները ակցիօնէրների առաջ եւ հրատարակել տեղեկութիւններ ընկերութիւնների գործերի ընթացքի մասին:

«Кавказ» հաղորդում է, թէ հարց է յարուցված Բարոնական փողոցում գտնվող «Южные Номера» հիւրանոցը ժամանակաւորապէս փակելու մասին, որովհետեւ սանիտարական զննութիւնը ցոյց է տուել, որ այդ հիւրանոցը գտնվում է վերին աստիճանի հակաուղղական դրութեան մէջ:

«Орловский Вестник» հաղորդում է, թէ կոմս Լ. Ն. Տօլստոյ վերջին ժամանակներս աշխատում է մի փոքրիկ վէպի վրա, «Старина» անունով:

Մեզ ինդրում են տպել հետեւեալը. «Մի Նոր—Բայազետի քաջանայ, առաջ այստեղի հիւանդանոցում եւ յետոյ մի մասնաւոր մարդու տան երկար ժամանակ հիւանդ պառկելուց յետոյ, յուլիսի 11-ին վախճանվում է: Հէնց նոյն երեկոյ նրան տանում են Նորաշեն եկեղեցու բակի սենեակը, ինչպէս պատմում են, առանց կարգ կատարելու: Իսկ երէկ յուլիսի 12-ին, գործակալ Զարդեղեան քաջանայի կարգադրութեամբ, քաջանաներին նեղութիւն չը պատճառելու համար, դիակը ֆայտօնով ուղարկում են Պօլիվանքի եկեղեցին, նոյնպէս առանց կարգ կատարելու, եւ այսօր բարեհաճում են թաղել: Եթէ մեր քաջանաները իրանց չըտուր ընկերակցի հետ այսպէս են վարվում, հապա ինչ կանեն նրանք անտէր աշխարհականների վերաբերմամբ: Ի՞նչպէս չը յիշենք, որ առաջնորդի ծառային թաղվիս ներկայ էին 40 քաջանաներ եւ կոնսիստօրիայի նախագահ Թաւադայեան վարդապետը դարձնական ասաց:

ԹԵՕԴՈՍԻԱՅԻՑ մեզ գրում են. «Կ. Պոլսում ժանտախտ երեւալու լուրը ստանալուց յետոյ» այստեղի կարանտինում աւելի սառակացրեցին հակողութիւնը. մի քանի չղճանաւոր բռնված են»:

ԲԱՌՈՒՄԻՑ հետեւեալ նոր մանրամասնութիւններ են հաղորդում մեզ յուլիսի 12-ի աղտի մասին. «Տերեկվայ ժամի 11 եւ 45

ընդունել այն հայեացքը, որի հետ ես համաձայն չեմ: Իմ գլխում եւս բարձրաձայն ու անկեղծօրէն արտայայտում եմ իմ համոզմունքներն ու զգացմունքները, ման եւս գալիս առանց փողպատի ու օւղյաժած օձիքների, դատում եմ մարդկանց ու երեւոյթների մասին բոլորովին անկեղծ, որովհետեւ այնտեղ, ուր ոչ մի բռնութիւն չը կայ, կեղծիքի կարեւորութիւն չը կայ...

Ինչպէս տեսնում ես, ընթերցող, ես, յիշաւի, ունեմ այնպիսի մի անկիւն, ուր անսահման իշխան եմ եւ ես անպայման ազատութիւն եմ վայելում, մի անկիւն, ուր չէ թափանցում ոչ մի օտար ոյժ, ոչ մի բռնութիւն: Այնտեղ ես ունեմ, ինչ որ յանկարծում եմ, անում եմ, ինչ որ կամենում եմ, ասում եմ, ինչ որ մտածում եմ: Եւ, չը նայելով, որ այնտեղ կամքս չէ սահմանափակվում ոչինչով, ես ոչ ոքի վնաս չեմ հասցնում,—իմ այդ տէրութիւնը կտրված է միայնաւ աշխարհից, չըլապատված է անմասնելի պարիսպներով, կապ չունի ուրիշների հետ, չէ խառնվում նրանց իրաւասութեան շրջանի մէջ:

Եթէ դիպուածքով յանկարծ բացվում է դուրս եւ ներս են թափանցում հետաքրքիր աչքեր, եւ իսկոյն լուծւում եմ, բացականչութիւններ:

—Պահպանեմ: Շղթաներից բաց թողէք դաւաճաններն, նշան բռնէք հրացաններով...

Ես ծիծաղում եմ եւ շտապում եմ փակել դուրս:

Միթէ այնպէս ես կարծում, ընթերցող, թէ միմիայն իմ գլուխս կարող է լինել այդպիսի ազատ ապաստարան: Նոյն կերպ յարմարացրու եւ քո գլուխը ու դու էլ կը սկսես ապրել նոյն յարմարութեամբ: Դու պարտական ես այդ անել, որովհետեւ դուրս միակ ապաստարանն է միայն այժմ ճշմարիտ ազատութեան համար:

S. Թ.

բազմաթիւ էր, երբ պայթեց Միքայելեան ծովային
մարտակոյտի վառարկող պահուստը. ամբողջ քաղաքը
դողմար, մինչեւ իսկ 6—7 մղոն հեռավորու-
թեան վրա զգալի երբեք չէր նկատուի: Սար-
սափելի, աննկարագրելի տեսարան էր. մարտկո-
յցի չորս կողմերը մարդկային մարմին զանազան
սեւեռացած մասերն էին ընկած, մի տեղ ոսկոր-
ներ, մի տեղ ոտքեր եւ ձեռքերի մասեր, մի
ուրիշ տեղ մի մի մեծ զանգուած, որ չէր կա-
րելի որոշել մարմին ինչ մաս լինելը, եւ շա-
րունակ այսպիսի սրտակոտոր տեսարաններ
«Ազդիւր» հրապարակում աղիւսի եւ քարէ
կոյտեր էին դիզված, անագին 3—4 պուշտոց
երկաթներ զէս ու զէն չլրացած եւ պայթե-
ած ռումբերի բեկորներն ամեն քայլափոխում: Մօտ
փողոցների մի քանի տան կտուրները եւ պա-
տերը փնտրված էին, իսկ հարկաւոր տան
ապակիները ջարդված են աստիկ հարուածից:
Պայթիւնի պատճառը յայտնի չէ, որովհետեւ
մօտիկ գտնվող զինուորներից ոչ ոք ողջ չէ մնա-
ցել: Բորձնակաւ թնդած թնդած թնդած կար-
ենթադրվում է, թէ կայծ ընկած լինի: Զոհե-
րի թիւը յայտնի չէ. ինչպէս լսեցի, այժմ 60-ի
է հասնում: Եւսկի են փորել փլատակներ
տակից դուրս հանելու մնացած մարմինները,
մարտկոյտի շատ մասերի հետ պայթելու մար-
դիկ էլ է չարտել ծովը: Զոհերի թիւում կան
2 օֆիցեր, մի փոխ-գնդապետ եւ մի երկրա-
չափ. քաղաքից մի մարդ է վերաւորված:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ժամատարի դեմ մաքառելու համար Կ.
Պօլտում կազմված է մի մասնաժողով, Ֆանո-
փաշայի նախագահութեամբ: Մասնաժողովի
վրա պարտաւորութիւն է դրված աշխատելու,
որ մայրաքաղաքի եւ նրա արտաքինների փո-
ղոցները մաքուր պահվեն, հսկելու, որ բնա-
կապակիները ամենակա հողացողութեամբ ախ-
տանանքին եւ ամեն ջանք գործ ընելու, որ
ժամատարից հեռացողները առանց բռնկա-
կան օգնութեան չը մնան: Ոստիկանական ըր-
թիւնների վրա պարտաւորութիւն է դրած օ-
րական երկու անգամ զինուորացիներ ուղարկել
մասնաժողովին, յակաւե-յանուանէ յիշատակե-
լով այն բոլոր հիւանդներին, որոնք վարակվել
են ժամատարով կամ ուրիշ որ եւ է տարա-
փոխի հիւանդութեամբ:

—«Indépendance Belge» լրագրի թղթակիցը,
Թէրանի բելգիական դեսպան Գրոսի հաղոր-
դած տեղեկութիւնները վրա հիմնվելով, գրում
է, թէ Պարսկաստանում ծառայող բելգիացի-
ները այնպիսի լաւ անուն են վաստակել, որ
Մուշաֆֆէ-Էդդին չափ որոշել է նրանց յանձ-
նել բոլոր միջնորդութիւններին մէջ ընթացիկ
մտցնելու գործը: Արդէն հիմա էլ Արդէշյանի
մաքառանքը յանձնված են բելգիացի կառուէր-
չարաւային նաւահանգիստների մաքառանքը
կառավարում են Տրիմ եւ Սին բելգիացիները:
Ինքենը-ազրօսմ Դաշէ աշխատում է երկրա-
գործական միջնորդութիւն հիմնելու նախագիծ
վրա եւ, երբ նախագիծը հաւանութիւն գտնի
Շահի կողմից, Դաշէ կը նշանակվի երկրագոր-
ծութեան միջնորդ: Բելգիացի Անտէլ բելգիացի-
ներ է մտցնում ֆինանսների միջնորդութեան
մէջ. Ժօզէ Բէնիկի ծառայում է որպէս Իւրիս-
կօնաւոր արտաքին գործերի միջնորդութեան
մէջ. Վէրկաւեյն ստացել է պատ-հանագրասնե-
րի զլխատու վարչութեան գործերի պատճառ-
մի ուրիշ բելգիացի ինժեներ նշանակված է
գրամատակարար տան կառավարիչ եւ աշխա-
տում է բարեփոխութիւններ մտցնել նրա մէջ:

—«Новості» հաղորդում է, որ սուլթանը
մահմադական ընտանիքներին արգելել է հրա-
ւիրել եւրոպացի դատարարականներ կամ ու-
սուցչականներ, եւ օստիկանութեանը պատուի-
րված է խտրել հսկել, որպէս զի այդ հրամանը
կատարվի:

ԻՍԼԱՄԻ ԼՈՒՐԵՐ

Մ Ա Ն Բ Ա Ն Կ Ա Ր

Թիֆլիսում մեծելութիւն է տրորում: Փողոց-
ներում ոչ ոք չը կայ: Մազադիները ժամե-
րով սպասում են յանձնարարներին, իսկ եթէ
պատահում են մազադին մտնողներ՝ նրանք էլ
ուսկի հովանաւոր համար են այնտեղ գնում,
քան թէ իր գնելու:

Պաշտօնական զէմբերը յուսահատեցնել
կարող են մարդու: Նրանք ձմեռն էլ արտա-
յայտում են թմրութիւն եւ անտարբերութիւն,
իսկ այժմ—բոլորովին անասնելի են դարձել:
Այդ պաշտօնականները, յորանջելով, երբեք
անգլապիտի գնում են իրանց պաշտօնատեղը,
չարունակում են այնտեղ յորանջել եւ մի քա-
նի ժամից լետոյ դուրս են գալիս այնտեղից
մայրով, ջարդված եւ ջախջախված:

Լաւ է, եթէ մէկը պատահի եւ մի նոր,
թարմ անկղզիտ պատմի: Համով-պղզիեղով ա-
նկղզիտ դեռ կարող է փոքր ինչ կենդանու-
թիւն տալ պաշտօնեայի զէմբին: Եթէ այդ էլ
չը կալ՝ մեռելութիւնը կատարեալ է:

Միայն մի տեղ եւ տեսայ Թիֆլիսում, ուր
այժմ երեւում է գործունէութիւն. նկատվում
են կենդանութեան եւ թարմութեան նշաններ:
Դա կովկասեան ցուցահանդէսի տեղումն է
եւ ցուցահանդէսի կօմիսարի գրասենեակում:
Արագութեամբ կանգնեցնում են չինութիւն-
ներ, ընդունում են յայտագիրներ եւ իրեր,
ուղարկում են զանազան տեղեր ծանուցում-
ներ, ծրագրներ եւ բացատրութիւններ:
Անկասկած, ցուցահանդէսում կը լինեն գե-
ղեցիկ կազմված եւ լիակատար բաժիններ:
Անկասկած նա կունենայ ուսանելի եւ հետա-
քերական կողմեր:

Իայց գաւառական մասը, պէտք է ենթադրել,
կը լինի անկատար եւ թերի:
Դաւանի մարդիկ բաւականաչափ չեն ըմբռ-
նել ցուցահանդէսի նշանակութիւնը եւ հոգ
չեն տանում նրա լիակատարութեան մասին:
Վարչական անձերից շատերը վերաբերվում
են գործին ձեւական կերպով, իսկ մասնաւոր
գործողները ոչ ոք եւ ետանդ չունեն ներգործա-
կան դեր կատարելու:

Մի քանի ամիս առաջ ցուցահանդէսի առի-
թով կայացաւ կովկասեան գիւղատնտեսական
ընկերութեան արտադրութիւնը մի նիստ:
—Իմ կարծիքով, ասաց երիտասարդ անդա-
մերից մէկը, պէտք է ցուցահանդէսում ներ-
կայացնել ոչ միայն այն, ինչ որ արված է
կովկասում հարկւր տարվայ ընթացքում, այլ
եւ այն, ինչ որ չէ արված:

Այդ բարեմիտ առաջարկութիւնը շատ զուար-
ճացրեց հանդիսականներին:

—Ինչպէս ներկայացնել այն, ինչ որ չէ ար-
ված, հարցրեց մէկը:
Երիտասարդը չը յուսեց: Նա սողորված
էր գերազմից զգացմունքներով:

—Ենթ կարող էինք, ասաց նա, ունենալ
կովկասում բազմաթիւ դպրոցներ, համալսա-
րան, պոլիտեխնիկում, երկաթուղիների իրա-
ցանց, բազմատեսակ հասարակական հիմնա-
րկութիւններ, բայց ոչինչ չունենք...

—Եստ լաւ, բայց ինչպէս կարող ենք այդ
չնդած ներկայացնել ցուցահանդէսում:

Նախագահը որոշում չը կայացրեց եւ առա-
ջարկեց անցնել հերթական հարցերին: Իսկ իմ
չարանձի հարեանքը, ընկերութեան հին ան-
դամներից մէկը, փափայեց իմ ակամջին հետե-
ւեալը:

—Ես մի միջոց գտել եմ երիտասարդ հոե-
տորի ցանկութիւնը կատարելու: Նրա ճանը կը
վերցնենք մի քանի ֆօնօգրաֆներով վրա եւ
այդ ֆօնօգրաֆները կը զետեղենք ցուցահա-
նդէսի զանազան տեղերում: Ֆօնօգրաֆների
օտո կանգնած յատուկ անձինք կը պատնշեն
անիւր եւ այդպիսով ճանի բովանդակութիւնը
կը դառնայ բոլորի սեփականութիւն:

—Այո, պատասխանեց նրան միւս հարեան, բայց
դառնով մենք կը ներկայացնենք տեղի
ունեցած մի ճառ, իսկ դարձեալ անկարող կը
լինենք ներկայացնել չնդած:

Նախագահը հարախրեց մեր ուղարկութիւնը
քննվող ճառերի վրա: Հարեաններս լսեցին:
Երիտասարդ հոետորի ցանկութիւնը անկաս-
կած բարի էր. բայց նա արտայայտվեց օտա-
րոտի եւ անտեղի ձեւով:

Եւ որքան լաւ կը լինէր, եթէ նա հոգ տա-
նէր լիակատար կերպով ներկայացնելու այն,
ինչ որ կայ եւ եղել է: Այն ժամանակ նրա
ցանկութիւնը իրագործված կը լինէր ուրիշ
ձեւով:

Մեր իրականութեան ճշգրիտ պատկերը—
ամենայն ապացոյցն է ոչ միայն մեր արածի,
այլ եւ այն բոլորի, ինչ որ պէտք է անէինք,
բայց չենք արել:

Ներկայացնել մեր իրականութիւնը լիակա-
տար կերպով—անա դժուար հարցը:
Ով պէտք է մեր երկրի զանազան անկիւն-
ներում դրա մասին հոգ տանէ:

Անա ձեռք ընտրող զէպը, որ արձանագըր-
վեց լրագրութեան մէջ:

Ցուցահանդէսի կօմիսարը դիմել էր մեր եր-
կրի գաւառագետներին, խնդրելով նպաստել,
որ գաւառի ազգաբնակչութիւնը ուղարկէ իր
արդիւնները ցուցահանդէս:

Գաւառագետը ստանում է թուղթը եւ ըն-
դունված ձեւով ուղարկում է նրան չըջարե-
րական կարգով գաւառագետների պրիստավնե-
րին:

Նա իր պարտաւորութիւնը կատարեց:
«Ինչ յանձնված գաւառի պրիստավներին ա-
ռաջարկում եմ անյապաղ կատար անել եւ ինձ
զեկուրանել»:

Այդպէս է հրամայում գաւառագետը:
Պրիստավները մէկը միւսին են ուղարկում
կօմիսարի թուղթը:

Եւ անա արդիւնքը:
«Իմ գաւառագետս չը կան անձեր, որոնց
մասնակցութիւնը ցուցահանդէսում օգտաւէտ
լինէր»:

Այդպէս մալադրում է պրիստավներից իւ-
րաքանչիւրը եւ թուղթը վերադարձնում գա-
ւառագետին:

Ձեռք հրաշալի կերպով պահպանված է իւ-
րաքանչիւրը իր դաս պատմականին է:
Գաւառագետը, համարելով իր պարտաւո-
րութիւնը կատարած, վերադարձնում է կօմի-
սարի ուղարկած թուղթը նրա վրա արած բո-
լոր մակարդութիւններով:

Ոնց՞ զգաւաւ:

Այն ինչ դեռ ներելի կարող է համարվել ու-
ստիկանական պաշտօնեաների համար, բոլորու-
միջ աններելի է այնպիսի անձի համար, ինչ-
պէս է հարկային տեսուչը, որ կոչված է ան-
դադար ուսումնասիրել ազգաբնակչութեան
անտեսական կեանքը:

Իսկ Արդահանում գտնված մի հարկային տե-
սուչ իրան արած դիմումին պատասխա-
նեց հետեւեալ կերպով:

«Գաւառում առհասարակ կուլտուրայի բա-
ցակալութեան պատճառով՝ չը կան գիւղատն-
տեսներ, արհեստագործներ եւ տնայնագործ-
ներ, որոնք կարողանային մասնակցել առաջի-
կայ ցուցահանդէսին, նոյնպէս չը կան առաւ-
ձին անասններ, ֆիրմաներ եւ հիմնարկու-
թիւններ որոնք մասնակցութիւնը կարելի լինէր
համարել օգտակար»:

Հարկային տեսուչի այս նշանաւոր պատաս-
խանքը լոյս տեսաւ «Тифлисский Листок» լը-
րագրի էջերում:

Այս անգամ այդ տողերից վրդովվեց տեղա-
կան գաւառագետը, որ, կարգալով հարկային
տեսուչի կարծիքը, ուղղեց լրագրի խմբագրու-
թեանը մի բողոք այդ կարծիքի դէմ:

«Արդահանի գաւառում, ասում է գաւառա-
պետը, կան 6801 ծով, որոնք վարում են ինք-
նուրոյն տնտեսութիւն, ցանում են հացահա-
տիկ, պահում են անասուններ, պատրաստում են
գորգեր, կարպետներ, օտնամաններ եւ առհա-
սարակ ապրում են այնպիսի կեանքով, ինչ-
պէս Անդրկովկասի միւս մասերում»:

Այնուհետեւ գաւառագետը յայտնում է, որ
Արդահանի գաւառից պէտք է ուղարկվեն
ցուցահանդէս բազմատեսակ իրեր, օրինակ,
փեթակ, հասոր, թել եւ թուշի պանիրներ,
կարպետներ, խուրջներ, զանազան կերպաս-
ներ, գուլպաներ, ձեռնոցներ, լուաղեղ, օր-
ոց, փայտեայ դուլեր եւ այլն:

Ինչ կասէ հարկային տեսուչը:
Նա երեւի սպասում է, որ Կովկասը դառ-
նայ մի Անգլիա, մի Ֆրանսիա, մի Գերմանիա,
որպէս զի այնուհետեւ արժանի լինի իր ար-
դիւնքները ցուցահանդէս տանելու:

Բայց այն էլ կայ, որ, երբ Կովկասը այդ
զարգացման կը հասնի, այն ժամանակ ազգա-
բնակչութիւնը ինքը կը հոգայ ցուցահանդէ-
սի մասին եւ այլ եւս հարկային տեսուչի ինա-
ստատարութեան եւ օգնութեան պահանջ չի
զգայ:

Այժմ մեր գաւառները դեռ կարօտ են զե-
կակարներին, խրախուսողներին եւ գործ կազ-
մակերպողներին:

Իւրաքանչիւր մարդ գաւառում, երբ տեղե-
կացաւ լրագրներից ցուցահանդէսի մասին,
իր պարտքը պէտք է համարէր բացատրել իր
չըջապատողներին, թէ ինչ նպատակների է
ծառայում ցուցահանդէսը եւ պէտք է աշխա-
տէր կազմակերպել իրերի առաքումը դէպի
ցուցահանդէս:

Մեր գաւառական եւ գիւղական կեանքը
անմխիթար վիճակի մէջ է: Նա շատ տեղ վը-
նաւոր է եւ առաջվանից կատարել: Բայց մի-
ունի եւ առաջադիմութեան ու կատարելագոր-
ծութեան փառքը:

Դուք, ժողովրդի մօտ գտնվող մարդիկ, ներ-
կայացրէ՞ք գաւառը համակովկասեան հասարա-
կութեան առաջ նրա իրական պատկերով եւ
նրա արած առաջադիմութեան փորձերով, ցոյց
տուէ՞ք նրա կարիքները եւ ցաւերը:

Թող հասարակութիւնը, մասնագէտները եւ
վարչական անձերը տեսնեն այդ բոլորը, քննեն
ժողովներում ձեռնարկած գաւառական հար-
ցերը եւ միջոցներ որոնեն օգնելու ժողովրդին:

Եթէ ցուցահանդէսը եւ նրա ժամանակ գու-
մարված ժողովները չեն տալ մեր սպասած
արդիւնքները, մեղաւոր կը լինենք մենք բո-
լորա:

Քաղաքի եւ գաւառի գործողներ, մասնա-
գէտներ, վարչական պաշտօնեաներ, տեղական
ինտելիգենցիային պատկանողներ, նպաստեցէ՞ք
մեր կարիքների լուրջ եւ բազմակողմանի ու-
սումնասիրութեան:

Դա մեր պարտականութիւնն է:
Այդ է պահանջում մեզինց մեր բազմաշար-
չար երկիրը:

Օգնութեան է կարօտ մեր բազմաշարչար
ժողովուրդը:

Վրձին

“ՄՇԱԿԻ” ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

13 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Օրէնսդրութիւնների ժողո-
վածուի մէջ հրատարակված է կայսրութեան
մէջ նաւահանգիստային տուրքերի առման բա-
րեփոխութեան մասին:

Օրէնքի 3-րդ 13-ին, առաւօտեան 9 ժա-
մին, Օրէնք կայարանը ժամանեց Մեծ Իշխան
Սերգեյ Ալեքսանդրովիչ. Նորին Բարձրութեանը
հանդիպելու վճիռվում նախագայտի պաշ-
տօնակատարը եւ իշխանաւոր անձինք: Պատ-
ուաւոր պահպաններ կարգված էին մօտայս-
կան գնդից: Ողջոյն տալուց յետոյ, Նորին
Բարձրութիւնը դնաց բանակը, ուր զօրահա-
ղէս արեց: Մեծ Իշխանը նախաճաչեց բանակի
օֆիցերական ժողովարանում: Նորին Բարձրու-

թիւնը ուղեւորվեց Մօսկվա պատաստար գնաց-
քով:

ՍԱՐԱՏՈՎ. Յուլիսի 13-ին մամուլի գործե-
րի պիւստը վարչութեան պետ Իշխան Շա-
խօսկոյ ճանապարհ ընկաւ դէպի Յարկին ու
Աստրախան:

ՍԱՐԱՏՈՎ. Երէկ հիմնովին այրվեց քաղա-
քային ժողովրդական թատրոնի շէնքը: Հրդե-
հը սկսվեց ցերեկը, երբ թատրոնում ոչ ոք չը
կար: Այրվել է ամբողջ թատրոնական գոյքը:

ՍԵՎԱՍՏՈՊՈԼ. Ռուսաց ընկերութեան «Օլ-
գա» շրջանաւորում, որ երէկ Սեվաստօպոլից
դուրս էր եկել Օդեսսա գնալու, նախապէս եւ-
պատօրիա մտնելով, Եւպատօրիայի նաւակա-
յանում կանգնած ժամանակ, դուրս գալուց
կէս ժամ առաջ, երեկոյեան ժամի իննին,
սկսեց այրվել մեքենաների բաժինը, շնոր-
հիւ մի նաւատիրի անզուգուութեան: Հրդե-
հը վիթխարի չափեր ստացաւ. ապրանք-
ները, ծանրոցները եւ դրամարկը, որի մէջ
կար քսան հազար ռուբլի, կրակը լափեց. մը-
նաց միմիայն նաւի հիմնակաղը. ճանապար-
հորդները աղաւթեցին:

Պէյկին. Վարձատրութեան հարցի վերաբեր-
մամբ կատարեալ համաձայնութեան եկան բո-
լոր պետութիւնները:

ԲԵՐԼԻՆ. Այսօր Reichsanzeiger-ում տպված
է նոր մաքսահարկերի եւ սակագների նախա-
գիծը:

Պէյկին. Օտարազգիներին բարեկամաբար
վերաբերվող փոխարքայ Չժանչիլդուն առա-
ջարկում է միջազգային յանձնաժողով հիմ-
նել Ձինաստանում միաբնակների արած-
ները քննելու համար: Բացի այդ, նա
ներկայացրեց անդիական կառավարութեանը
ծրագիր հիւսիսային Ձինաստանում հետզհետեւ
զօրացող աւազակութիւնը ճնշելու համար,
որովհետեւ երկիրը անարեկված է բուռնջը-
կաններից ու նախկին չինական զինուորներից
բաղկացած աւազակախմբերից:

ԲԵՐԼԻՆ. «Norddeutsche Zeitung»-ում հրա-
տարակված մաքսային սակագինը պարունա-
կում է արդէն «Stuttgarter Beobachter»-ում
տպված պրակները հացահատիկների եւ մթեր-
քների մաքսերի մասին. գետնախնձորը աղաւթ
է մաքսից: Դաշնագրական մաքսերը կորեկից
չեն կարող 5 մարկից ցած լինել, ցորենից՝
5 1/2-ից ցած, գարբից՝ 3-ից ցած, վարսակից՝
5-ից ցած:

ՀԱՎՐ. Պիւսի իր ընտանիքով ողջ-առողջ
հասաւ այստեղ:

ՍԱՅԳՈՆ. Օրէնսեան պրինց Հէնրիկոսի
առողջութեան վերաբերեալ բեւոյժները հա-
ղորդում է, թէ զիշերը լաւ է անցել, տաքու-
թեան աւտիմանը իջել է եւ հեռաւոր իրան
լաւ էր գգուել:

ԲԵՐԼԻՆ. Մաքսային սակագին վերաբերեալ
օրէնքի հրատարակութեան առիթով «Nord-
deutsche Zeitung» նկատում է. «Երբ ցաւալի
անհամատեղութեան շնորհիւ՝ նախագիծ մէջ
պարունակված մաքսային սակագների մի մա-
սը յայտնի դարձաւ ամենքին, կայսերական
կանցլէրը ստիպված եղաւ դաշնակից կառավա-
րութիւններից համաձայնութիւն ինչդրել այդ
դժուրմէնտի պաշտօնական հրատարակութեան
համար: Պէտք է յիշ

Электротечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванская ул.